

Պ-390-26.11.2019,17.01.2020-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի ՀՕ-165-Ն (այսուհետ՝ Օրենսգիրք) 159-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3.1.-րդ մասով.

«3.1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորող (ուսանող) վարձու աշխատողի ուսման վարձը փոխհատուցվում է ուսումնական տարվա ավարտից հետո՝ սույն Օրենսգրքի 160՝ հոդվածով սահմանված կարգով»:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել նոր՝ 160՝ հոդվածով.

*«Հոդված 160՝ . Վճարված եկամտային հարկի գումարներից ուսման վարձի փոխհատուցման նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարվող ուսման վարձի գումարի վերադարձը*

1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման համար վճարված գումարը:

2. Եկամտային հարկի հաշվարկման եւ վճարման հաշվետու նույն ժամանակաշրջանում սույն հոդվածով եւ Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված արտոնություններից միաժամանակ օգտվելու իրավունք ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է օգտվել դրանցից միայն մեկից:

3. Սույն օրենքով նախատեսված փոխհատուցման իրավունքից.

1) կարող են օգտվել ՀՀ քաղաքացիները,

2) վարձու աշխատող հանդիսացող սովորող (ուսանող) ֆիզիկական անձը կարող է օգտվել միայն մեկ մասնագիտություն ձեռք բերելու համար:

4. Սույն հոդվածի նկատմամբ կիրառելի են Օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերը եւ 5-րդ մասը:

5. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

### **Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարը հաշվարկվում է 2020 թվականի սեպտեմբերի մեկից:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը, ինչպես նաեւ համապատասխան մասնագիտությունների ցանկը կառավարությունը սահմանում է օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի ՀՕ-165-Ն (այսուհետ՝ Օրենսգրք) 159-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3.1.-րդ մասով.

«3.1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորող (ուսանող) վարձու աշխատողի ուսման վարձը փոխհատուցվում է ուսումնական տարվա ավարտից հետո՝ սույն Օրենսգրքի 160<sup>1</sup> հոդվածով սահմանված կարգով»:

**Հոդված 2.** Օրենսգրքը լրացնել նոր՝ 160<sup>1</sup> հոդվածով.

*«Հոդված 160<sup>1</sup> . Վճարված եկամտային հարկի գումարներից ուսման վարձի փոխհատուցման նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարվող ուսման վարձի գումարի վերադարձը*

1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման համար վճարված գումարը:

2. Եկամտային հարկի հաշվարկման եւ վճարման հաշվետու նույն ժամանակաշրջանում սույն հոդվածով եւ Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված արտոնություններից միաժամանակ օգտվելու իրավունք ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է օգտվել դրանցից միայն մեկից:

3. Սույն օրենքով նախատեսված փոխհատուցման իրավունքից.

1) կարող են օգտվել «Քաղաքացիները, չեն կարող օգտվել ոչ ռեզիդենտ եկամտային հարկ վճարողները»,

2) վարձու աշխատող հանդիսացող սովորող (ուսանող) ֆիզիկական անձը կարող է օգտվել միայն մեկ մասնագիտություն ձեռք բերելու համար: անգամ:

4. Սույն հոդվածի նկատմամբ կիրառելի են Օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերը եւ 5-րդ մասը: մասի 1-ին, 2-րդ կետերը:

5. Սույն հոդվածով սահմանված՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

### **Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Եւ տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի մեկից հետո ծագող հրավահարաբերությունների վրա:

2.Վերադարձման ենթակա եկամտաժխին հարկի գումարը հաշվարկվում է 2020 թվականի սեպտեմբերի մեկից

32. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը, ինչպես նաեւ համապատասխան մասնագիտությունների ցանկը կառավարությունը սահմանում է օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-390-26.11.2019,17.01.2020-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական գեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «չեն կարող օգտվել ոչ ռեզիդենտ եկամտային հարկ վճարողները» բառերը փոխարինել «կարող են օգտվել ՀՀ քաղաքացիները,» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «միայն մեկ անգամ» բառերը փոխարինել «միայն մեկ մասնագիտություն ձեռք բերելու համար:» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի մեկից հետո ծագող իրավահարաբերությունների վրա» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածի 2-րդ մասը դարձնել 3-րդ մաս:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 2-րդ մաս. «Վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարը հաշվարկվում է 2020 թվականի սեպտեմբերի մեկից:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում «մասի 1-ին, 2-րդ կետերը» բառերը փոխարինել «մասը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «3.1.-րդ մասով.» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ.  «3.1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների, կառավարության կողմից հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ սովորող (ուսանող) վարձու աշխատողի ուսման վարձը փոխհատուցվում է ուսումնական տարվա ավարտից	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

		<p>հետո՝ սույն Օրենսգրքի 160՝ հոդվածով սահմանված կարգով, որը կիրառելի է.</p> <p>1) <u>հետքուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի և կլինիկական օրդինատորի հիմնական և կրթական ծրագրերով սովորողների (ուսանողների) համար.</u></p> <p>2) <u>բարձրագույն մասնագիտական կրթության՝ բակալավրի, մագիստրոսի և դիպլոմավորված մասնագետի հիմնական կրթական ծրագրերով սովորողների (ուսանողների) համար.</u></p> <p><u>Սույն մասով սահմանված ուսման վարձի փոխհատուցումից սովորողը (ուսանողը) կարող է օգտվել բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթություն հրականացնող ուսումնական հաստատությունների կողմից՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի, բակալավրի, մագիստրոսի և դիպլոմավորված մասնագետի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:»:</u></p>		
--	--	---	--	--

<p>«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</p>	<p>Նախագծի 2-րդ հոդված</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված 160<sup>1</sup> հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 160<sup>1</sup>. Վճարված եկամտային հարկի գումարներից ուսման վարձի փոխհատուցման նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարվող ուսման վարձի գումարի վերադարձը</p> <p>1. Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով,</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Չի ընդունվել:</p>
--	----------------------------	--	----------------------	----------------------



		<p>բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն և <u>հետքուհական</u> <u>մասնագիտական կրթություն</u> <u>իրականացնող ուսումնական</u> <u>հաստատությունների,</u> <u>կառավարության կողմից</u> <u>հաստատված</u> <u>մասնագիտություններով</u> <u>առկա</u> <u>ուսուցմամբ՝ հետազոտողի,</u> <u>կլինիկական օրդինատորի,</u> <u>բակալավրի, մագիստրոսի և</u> <u>դիպլոմավորված</u> <u>մասնագետի</u> հիմնական կրթական ծրագրերով սովորողի (ուսանողի) ուսման համար վճարված գումարը:</p>		
--	--	--	--	--